

# «ՓԱԽՍՏԱԿԱՆՆԵՐԻ ԵՎ ԱՊԱՍԱՆԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԻԾ

ՆԱԽԱԳԻԾ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔ

### «ՓԱԽՍՏԱԿԱՆՆԵՐԻ ԵՎ ԱՊԱՍԱՆԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**Հոդված 1.** «Փախստականների և ապաստանի մասին» 2008 թվականի նոյեմբերի 27-ի ՀՕ-211-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 34-րդ հոդվածը լրացնելու 5-րդ մասով՝ հետևյալ բովանդակությամբ.

«5. Մինչև սույն հոդվածի 4-րդ մասի 3.1 կետով սահմանված փաստաթղթերի տրամադրման համար ծրագրային և տեխնիկական ապահովումը լիազոր մարմինը ապաստան ստացած փախստականներին տրամադրում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի դեկտեմբերի 3-ի «Փախստականին, ինչպես նաև քաղաքական ապաստանի իրավունք ստացած անձին տրվող կոնվենցիոն ճամփորդական փաստաթղթի նկարագիրը և փաստաթուղթը տալու կարգը հաստատելու մասին» N 1417-Ն որոշմամբ հաստատված կոնվենցիոն ճամփորդական փաստաթուղթը»:

**Հոդված 2.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից: